ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք,
հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.lori @mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-ը մայիսի 2015 թվականի
N/ 05

## ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և առաջնորդվելով Հալավար համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 03-ի «Հալավար համայնք 2015 թվականի փոփոխված բյուջեն հաստատելու մասին» թիվ 02-Ն որոշմամբ*

*Որոշում եմ.*

Կատարել 2015 թվականի բյուջի եռամսյակային բաշխումներում վերաբաշխումներ բյուջեի ծախսային մասում՝ բաժին 01, խումբ 1, դաս 1-ի (բյուջետային հիմնարկների պահպանման ծախսեր), ըստ տնտեսագիտական դասակարման 4111 հոդվածի(աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) 2015թ.-ի երկրորդ եռամսյակի համար նախատեսված 2130.0հազ. դրամ ծախսը(աճողական կարգով տարեսկզբից) ավելացնել 100.0(մեկ հարյուր հազար)դրամով և սահմանել 2230.0հազ. դրամ, նույն չափով նվազեցնելով չորրորդ եռամսյակում նախատեսված վերոնշյալ հոդվածի ծախսը: Բյուջեի եկամտային մասում՝ «Այլ եկամուտների» 7415 հոդվածի«Գույքի վարձակալությունից եկամուտներ»(Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալությունից եկամուտներ) 2015թ.-ի երկրորդ եռամսյակի համար նախատեսված 790.8 հազ. դրամ եկամուտը(աճողական կարգով տարեսկզբից) ավելացնել 100.0(մեկ հարյուր հազար)դրամով և սահմանել 890.8հազ. դրամ, նույն չափով նվազեցնելով չորրորդ եռամսյակում նախատեսված վերոնշյալ հոդվածի եկամուտը:

Հաստատել Հալավար համայնքի 2015 թվականի բյուջեի եկամտային և ելքային մասերի բաշխումը ըստ եռամսյակների համաձայն հավելված1 և հավելված 2-ի:

*Հալավար համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*